

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԳՈՐԾԸ»

Ս. Ե. ՓԱՆՈՍՅԱՆ

XIX դարի վերջին երկու տասնամյակները հայ ժողովրդի կյանքում նշանավորվեցին ազգային աննախադեպ զարթոնքով: «ԺԹ»-ը դարու ութսունական թվականներուն էր,— նկատում է Լևոն Շանթը,— որ «բանը» կսկսի մարմին առնել: Այնքան ժամանակ միահամուռ կերպով երազված, քարոզված, կանչված ու գովաբանված ազատության ձգտումին կհաջորդե վերջապես գործնական ձգտումը, ծայր կուտան հայ հեղափոխական կազմակերպություններն ու շարժումները: Վանի, էրզրումի, Ջեյթունի, Սասունի ու Պոլսի քանի մը նախնական, տեղական շարժումներն ու խարխափումներն էտքը, կուզան Արմենական ու Հնչակյան ավելի կազմակերպված ցույցերն ու խլրտումները և վերջապես Կովկասեն, և շատ բնական կերպով Կովկասեն, հրապարակ կիջնե Հայ Հեղափոխական Դաշնակցությունը¹: Բարդ ժամանակներ էին. կուսակցությունների դադարի գործունեությունը՝ սուլթանական կառավարության և ցարիզմի մշտական հսկողության ներքո, շփուլացող լարում էր պահանջում, արտակարգ պայմաններ պարտադրում, որոնք չէին բացառում նաև վրիպումներն ու սխալները: Մյուս կողմից պետք է նկատի ունենալ տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների առանձին-առանձին գործունեությունը, նրանց ներքին տարածայնությունները, որոնք, որքան էլ անցանկալի, կրթեմն վերաճում էին բացահայտ առճակատումների:

Գարավերջի այս բարդ, երբեմն ծայրաստիճան շիկացող մթնոլորտում, աղգային-ազատագրական և հեղափոխական պայքարի բովում, այդ պայքարի հետ սերտորեն կապված է սկզբնավորվում Արփիար Արփիարյանի «գործը», որը թերևս իր նախադեպն ու հաջորդը չունի հայ իրականության մեջ:

1890 թ. հուլիսի 15-ին Պոլսում հնչակյանները կազմակերպում են Գում-Գուփուփի նշանավոր ցույցը, որն ավարտվում է թուրք ոստիկանության հետ զինված բախումներով: Դեպքերին հաջորդում են մատնություններն ու ձերբակալությունները: Պոլսի ոստիկանության ձեռքն է ընկնում հնչակյան Պետրոս Մարիմյանի Տրապիզոնից ուղարկած նամակը, որի սլառաձայնում նույնմբերի 9-ին ձերբակալվում է նաև Արփիար Արփիարյանը: Նամակագիրը ամենայն հավանականությամբ իր կուսակից ընկերոջը խորհուրդ էր տալիս բարեկամանալ Արփիարյանի հետ, որը «հայտնի ու խելոք մարդ ըլլալով»՝ կարող էր «շատ առավել օգտակար ըլլալ...»²: Այդ ժամանակ Արփիարյանն արդեն իսկ ճանաչված անուն էր հայության երկու հատվածներում՝ թե՛ որպես զրական և թե՛ որպես հասարակական-քաղաքական գործիչ: Մկրտիչ Փորթուզալյանի միջոցով Հայկակ-Արփիարը սերտ կապեր էր հաստատել

¹ Լևոն Շանթ, Անկախությունը պահանջ ազգային գոյության, Ե., 1991, էջ 89—90:

² Տե՛ս Յանելյան «Դրոշակ»-ի, 15 դեկտեմբեր 1899, էջ 33:

Ֆր. Արծրունու «Մշակ»-ի հետ և թղթակցում էր նրան, Հնչակյան գործիչը միաժամանակ վարում էր «Արևելք»-ի գրական բաժինը, ինչպես նաև դեկավարում «Մասիս» գրական շաբաթաթերթի խմբագրությունը:

Զերբեակալությունից երկու օր հետո՝ 1890 թ. նոյեմբերի 11-ին, կատարվում է առաջին հարցաքննությունը: Ամբաստանությունները ծանր էին՝ մասնակցություն Գում-Գափուի դեպքերին, «փաստաբան խաչիկ էֆենտիի սպանության գործին», խռովարարություն, «օսմանյան տերության դեմ աննպաստ արարքներու» գործադրություն, որոնք սպառնում էին նույնքան ծանր պատժով: Սակայն ո՛չ վերջիններիս գիտակցումից և ո՛չ էլ հարցաքննողի ուղղակի սպառնալիքներից Արփիարյանը չի ընկրկում: Իր պատասխանը որոշակի է. «... ես չեմ ընդունիր ձեր ըսածները, կբողոքեմ. ասոնք բոլորը թշնամական գրպարտություններ են ինձի դեմ. ... ես այդ կարգի գործերու մեջ երբեք մասնակցություն չեմ ունեցած. ես օսմանյան տերության ամենահավատարիմ հպատակն եմ...»³:

Մինչդեռ երկրորդ հարցաքննությանը, որը տեղի է ունենում նոյեմբերի 22-ին ամբաստանյալի գրավոր խնդրանքով, բոլորովին փոխված ենք տեսնում Արփիարյանին: Ոստիկանության փորձված միջոցներն են ազդում, թե հոգևոր ամրությունը չի դիմանում, Արփիարյանն այնուամենայնիվ տեղի է տալիս՝ մատնելով Վահրամ Տատյանին, բժիշկ Հարություն Թիրյաքյանին, Նար-Պեյլին (հորեն արքեպիսկոպոս Գալֆայան-Լուսինյան): Վերջինիս անունը մինչ այդ՝ դեռ սեպտեմբերի 10-ի մատնագրում հիշատակել էր դավաճան, կարգալույծ, վարդապետ Մամբրե Պենլյանը, որը 1895 թ. հուլիսի 22-ին Հ. Յ. Դ. Պոլսի կենտրոնական կոմիտեի վճռով ահաբեկվեց Սկյուտարում՝ «Ռումբ» կոմիտեի Ա. խմբի կողմից⁴: Ի դեպ, հետագայում՝ Եվրոպա անցնելուց հետո, ինչպես իր ձերբեակալության համար, այնպես էլ մյուս մատնություններում Արփիարյանը մեղադրում էր ոստիկանության նախարար Նազրմի գործակալը դարձած նույն այդ Մամբրեին:

1891 թ. սկզբին Արփիարյանն ազատ է արձակվում սուլթանի ներումով, մինչդեռ վերոհիշյալ նամակի հեղինակը՝ Պետրոս Մարիմյանը, ցմահ բանտարկության է դատապարտվում, մի քանի ուրիշ հեղափոխականներ՝ մահվան: Զծանրանալով այսօր արդեն անճշգրտելի զանազան վկայությունների ու պնդումների վրա, որոնք ահեղաձայն ամբաստանում են Արփիարյանին, ասենք միայն, որ ազատվելուց անմիջապես հետո՝ 1891 թ. հունվարի 12-ին, «Արևելք»-ում նա հրատարակում է իր մեղալագիրը՝ «Ծրախտագիտական արտահայտություն առ վեհ. Սուլթանն» վերտառությամբ (տե՛ս Հավելվածը հոդվածի վերջում): Երվանդ Օտյանը, որ մշտապես բարեկամական սերտ կապեր է ունեցել Արփիարյանի հետ, իր «Գրական հիշատակներում» գրում է. «5—6 ամսվան բանտարկութենե մը ետքը Արփիարյան ազատ կարձակվեր, գրելով այն համբավավոր մեղալագիրը, որուն համար տարիներով այնքան դատափետվեցալ խեղճը: Բանտեն ելլելեն ետքը Արփիար իր հարաբերությունը բոլորովին խզեց «Արևելք»-ի հետ...»⁵: Իրականում խզմանը պատճառը մեղալագիրն էր, որը, շգիտես ինչպիսի տրամաբանությամբ, ոմանք հակված են նույնիսկ սուլթանի հասցեին պամֆլետ համարել: Թերթի խմբագրական վարչությունը ընդդիմացել է մեղալագիրը տպագրելու Արփիարյանի վճռին, բայց ստիպված է եղել տեղի տալ նրա սպառնալիքների առաջ՝ սակայն հրա-

³ Նույն տեղում, էջ 26—27:

⁴ Տե՛ս «Դրոշակ», 1895, № 12, էջ 7, № 14, էջ 5—7:

⁵ Ե. Օտյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4. Ե., 1962, էջ 21:

⁶ Տե՛ս «Հայ Արք գրականության պատմություն», հ. 4. Ե., 1972, էջ 380:

տարակուսից հետո այլևս անհնարին գտնելով նրա անդամակցութիւնը խըմ-
բագրութեանը:

Նույն տարին Արփիարյանը Հովհաննես Շահնազարի հետ հիմնում է
«Հայրենիք» օրաթերթը, որը զգալի նպաստներ է բերում արևմտահայ գրա-
կան-մշակութային կյանքին: Միաժամանակ, ինչպես վկայում է Երվ. Օտյա-
նը, «Հայրենիք»-ի խմբագրատունը հնչակյան կենտրոնն էր, իսկ կազմակեր-
պութեան թելերը Արփիարյանի ձեռքին էին:

1895-ի սեպտեմբերի 30-ին Պոլսում հնչակյանները կազմակերպում են
Պապը—Ալիի ցույցը՝ նպատակ հետապնդելով արագացնելու բարենորոգում-
ների ծրագրի իրագործումը: Ցույցը վերածում է ծավալուն բախումի, ապա՝
ջարդի: Դրանից հետո է, նկատում է Օտյանը իր «Տասներկու տարի Պոլսեն
դուրս» հուշերում, որ «Դաշնակցութեան հակառակութիւնը սկսավ Արփիար-
յանի դեմ: Այդ ցույցը, ինչպես հայտնի է, միմիայն Հնչակյան կուսակցու-
թիւնը կազմակերպած էր, իբր՝ թե կառավարութեան վրա ճնշելու և Հայաս-
տանի բարենորոգմանց ծրագրին գործադրութիւնը փութացնելու համար և որ
ուրիշ արդյունք չունեցավ, այլ եթե ընդհանուր ջարդերուն պատրվակ ըլ-
լաւ»⁷: Հոկտեմբերին Հ. Յ. Դ. Պոլսի կենտրոնական կոմիտեն թուցիկ է հրա-
տարակում, ուր դատապարտում է կազմակերպված ցույցը՝ իր անպատրաս-
տութեամբ, աննպատակահարմարութեամբ և ծանր հետևանքներով: Դատա-
պարտվում է նաև հնչակյանների ժխտական և անհանդուրժող վերաբերմունքը
Դաշնակցութեան նկատմամբ: Նոյեմբերի 13-ին կոմիտեն պաշտոնագիր է
ուղարկում «Արևելք»-ի, «Հայրենիք»-ի և «Ճերիտի Շարդի»-ի խմբագրու-
թիւններին, ուր մասնավորապես ասվում էր.

«Կենտրոնական կոմիտեն իր երկի ճիստին մեջ գրադվելով ազգի սույն
սագնապալի վայրկյանին մայրաքաղաքիս հայ լրագրութեան ազգակործան
ընթացքին փնտրեցաւ և.

Նկատելով որ ...լրագիր մամուլի բարձր կոչումին չձառայելէ գատ, կա-
ռավարութեան ձեռքը անաւրգ գործի դարձած իր գոյութեամբ վնասակար կըլ-
լա հայկական դատիւն.

Նկատելով որ ...լրագիր, առանց իր կարծիք հայտնելու, սուլբանական
բոլորովին ստահող պաշտոնական գեկուցումներն ու թելադրված հողվածները
հրատարակելով կմոլորեցնեն ու կխաթե արյունոտ հայ ժողովուրդը ու կնպաստեն
հայկական դատի խեղդվելուն.

Նկատելով որ ...լրագրին գոյութիւնը արատ մըն է հայութեան ու իր ըն-
թացքը դավանանքութեան է՝

Որոշեց.

- ա) Վաղմեն սկսեալ անպայման դադարման դատապարտել... լրագիրը:
- բ) Մահով պատժել այն տնօրէններն ու խմբագիրներն, որոնք համարձա-
կին մեր որոշումին հակառակի կամ՝ կառավարութեան հանձնելով սույն պաշ-
տոնագիրը՝ անոր օգնութեան դիմել»⁸:

Որոշումը գրեթէ ամբողջութեամբ մեջ բերեցինք՝ հերքելու համար այն
թշուր պնդումը, թե Դաշնակցութիւնը թերթերի դադարեցումը պահանջում էր՝
«կառավարութեան դեմ ցույց մը բրած ըլլալու համար»⁹:

⁷ Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 50:

⁸ Յատկապէս «Դրոշակ»-ի, 15 դեկտեմբեր 1899, էջ 28:

⁹ Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 51:

Պաշտոնագրերը՝ «կարմիր կնիքով նամակները», եթե իրարանցում են առջ բերում «Արևելք»-ի և «Անկախության Շարժիչ»-ի խմբագրություններում, ապա, ինչպես վկայում է Օսյանը, գոնե արտաբուստ անողոքողը են թողնում Արփիարյանին: Այնուամենայնիվ, Հովհաննես Շահնազարը որոշում է հանդիսել Յուսուֆյանին*, որը ղեկավարում էր Դաշնակցության Պոլսի կենտրոնական կոմիտեն, հույս փայփայելով բացատրություններով լուծել խնդիրը: Բանակցությունները ոչ միայն ցանկալի արդյունք չեն տալիս, այլև ավարտվում են փոխադարձ սպառնալիքներով: Յուսուֆյանի «Ձեզ կղարնենք»-ին Շահնազարը պատասխանում է «Գեզ Պոլսեն հեռացնել կուտամ» սպառնալիքով, — գրում է Օսյանը:

«Հայրենիք»-ը շարունակում է իր գործունեությունը: Դաշնակցության Պոլսի կենտրոնական կոմիտեն իր հայտնի որոշումից տասն օր հետո՝ նոյեմբերի 23-ին, վճռում է «անհապաղ ի գործ դնել 13 նոյեմբերի պաշտոնագրին սպառնալիքը, մահվան պատժի ենթարկելով Ա. Արփիարյան, և վճռին գործադրությունը հանձնեց ՍԾՎ-ՍԱՐ ենթակոմիտեի անհարկիչներուն»¹⁰: Հարկ է նշել, որ հայոց մարտական կուսակցության հետևողականության պատճառն այս դեպքում ընդամենը Արփիարյանի անհնազանդությունը չէր: Նրա ոչ հեռավոր անցյալը շէր մոռացվել, և նա ամբաստանվում էր «մեկի ավելի ծանր հեղափոխական հանցանքներու մեջ»՝ գործված 1890—1895 թթ.:

1895 թ. դեկտեմբերի 25-ին խմբագրությունից տունդարձի ճանապարհին Արփիարյանը դաշույնի երևք հարված է ստանում: Երկու օր անց «Հայրենիքը» ծանուցում է, որ «Իր բազմաթիվ բարեկամները ուրախությամբ պիտի լսեն, թե կյանքը վտանգե բուրդովին գերծ է»¹¹: Բազմաթիվ մարդիկ են այցելում Արփիարյանին, դրանց մեջ՝ նաև դաշնակցական Արշակ Վամյանը (Օննիկ Դերձակյան), որը մասնավորապես պնդում է մահափորձի արդարացիությունը: Շուտով Արփիարյանը մեկնում է Լոնդոն:

«Դաշնակցության մահափորձը ցույց տված էր, — գրում էր Օսյանը, — թե Արփիարյանը հնչակյան մըն էր, մինչդեռ մինչև այն ատեն նազրմ փաշա կկարծեիր, թե Արփիարյան իր համբավվոր մեղայագրեն և Մայր եկեղեցիին մեջ ըրած հանդիսավոր երդումեն հտքը, այլևս հրաժարած էր հեղափոխութենե: Ասկև զատ, իր ներկայությունը անհրաժեշտ էր Լոնտոնի մեջ, որ նազարբեկի և իր կնոջ դեմ դժգոհությունը ծայր տված էր»¹²: Իրականում, սակայն, Արփիարյանը Պոլսից հեռանում էր ավելի շատ հետապնդումներից խուսափելու նպատակով, քան զի, ինչպես Միքայել Վարանդյանն է նկատում, «Դաշնակցությունը» սովորություն ուներ հետապնդելու դավաճաններին անողոք վրեժխնդրությամբ մինչև դերեզման...»¹³: Անշուշտ իրողություն էր նաև նազարբեկյանի պրոբլեմը, որը դեռ 1895-ին հեղափոխականների շրջանում հայտնի էր որպես «խաշագողների պետ»: Վերջինիս և Արփիարյանի հակամարտության մասին հետաքրքիր վկայություններ կան վաղամեծիկ հեղափոխական Շահեն Տարհատի մի նամակում: 1896 թ. դեկտեմբերին Կիպրոսի և Եգիպտոսի դաշնակցական կազմակերպությունների պատասխանատու ներկայացուցիչ Մարթինին (Մարտին Մուրադյան) նա գրում էր Կահիրեից. «Հոս

* Ծնունդով երևանցի Հովհաննես Յուսուֆյանը (1860—1920) Հ. Յ. Դաշնակցության աստիճան տասնամյակի ամենավատակամար կազմակերպիչներից և քարոզիչներից էր, Պոլսի և Ամերիկայի Դաշնակցական ուժեղ կազմակերպությունների ստեղծողը: Վախճանվել է Ծնունդից ծայր աղքատության մեջ:

¹⁰ Յուսուֆյան «Գործակ»-ի, 15 դեկտեմբեր 1899 թ., էջ 29:

¹¹ Ե. Օսյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 55:

¹² Նույն տեղը, էջ 58:

¹³ «Հայրենիք», 1924, հունիս, էջ 136:

կը գտնվին Հնչակյաններ, թե Արփիարյան և թե Նազարբեկյան: Առաջինը ա-
վելի համակրանք կը վայելէ: Իսկ երկրորդը կը ջանա այլևայլ հրատարակու-
թյուններով կոտրել մյուսին վարկը, բայց չպիտի հաջողի, գեթ ես այնպես կը
կարծեմ, որովհետև ժողովուրդը առհասարակ, զգվանք կը հայտնե՛ս այդ մար-
դուն նկատմամբ. անհիկա մեռած է բարոյապես, ոչինչ չի կրնար կենդանացնել
զանի»¹⁴: Խոսքը դրամական մեծ հանգանակությունների յուրացման մասին
էր, որի համար փոխադարձաբար մեկմեկու դատապարտում էին հնչակյան
երկու գործիչները: Ընդհանրապես պետք է նկատել, որ հնչակյան կուսակցու-
թյան բարոյական անառողջ մթնոլորտը հատկապես սրվում է 1895-ի դեպ-
քերից հետո: Պառակտումը չի ուշանում. 1896 թ. կուսակցությունը բաժանվում
է երկու մասի: Հին կենտրոնին ընդդիմադիր ուժերը, առաձնանալով՝ իրենց
կոչում են Վերակազմյալ հնչակյան կուսակցություն, որն անմիջապես բանակ-
ցություններ է սկսում Հ. Յ. Դաշնակցության հետ՝ միության կամ սերտ հա-
մադրժակցության համար: Չանդրադառնալով միությանը խանգարող մյուս
սլատճառներին և վկայակոչելով Մ. Վարանդյանին՝ միայն ասինք, որ Ար-
փիարյանի ներկայությունը Վերակազմյալ հնչակյանների ղեկավարության մեջ
«մեն-մենակ բավ էր՝ դորժը վիժեցնելու»: Դաշնակցության նշանավոր գա-
ղափարախոսը՝ Վարանդյանը, տարիներ անց բուրոգովին ուրիշ առիթով և կըր-
քերից միանգամայն անմասն, խորապես տրամաբանված իր տեսակետն էր
ներկայացնում միության խնդրի վերաբերյալ. «Միայն էր, անշուշտ, Տամատյա-
նի և իր հեղափոխական զինակիցների կողմեն՝ Վերակազմյալ կուսակցության
չլուխը դնել մի մարդ, որ թեև փայլուն, օժտված հրապարակագիր էր—գուցե
ամենեն փայլունը թյուրքահայաց մեջ, բայց անսկզբունք ու աննկարագիր մեկն
էր, դուրկ հեղափոխական խառնվածքե և որ արդեն իսկ վարկաբեկ եղած էր
1890-ին, սուլթանական կառավարությանն ուղղած իր ծանոթ մեղայականով:
Եվս տոավել սխալ էր այդ ընթացքը՝ որ Վերակազմեալ Հնչակյան հատուածը
որոշած էր բանակցության մտնել—ուժերու միությունն իրագործելու համար—
Հ. Յ. Դաշնակցության հետ, մի կուսակցության՝ որ արդեն իսկ դատապարտած
էր Արփիար Արփիարյանը»¹⁵:

Միության համար եռանդուն գործունեություն էր ծաղկել նաև Հովհան-
նես Շահնազարը: Ժնևում խնդրի շուրջ 1900 թ. նա բանակցում է Քրիստափոր
Միքայելյանի հետ՝ միաժամանակ առաջարկելով պատվո ատյան ընտրել և
դատել Արփիարյանին: Շատերն էին պնդում պատվո ատյանի անհրաժեշտու-
թյունը: Նույն 1900-ին «Դրօշակ»-ին հասցեագրած նամակում եվրոպայնակ
երկու հայեր, առաջադրելով նույն հարցը, մտահոգություն էին հայտնում Ար-
փիարյանի «գործի» շուրջ ծավալվող նոր վեճերի առթիվ՝ նկատելով, որ «ան-
կից ծաղած չարիքը կը հասնի նույնիսկ կուսակցությանց շրջանակեն դուրս
ապրող հայերուն ալ, ըստ որում՝ զուտ ցեղակցական կապը, որով միացած
ենք օտար հողին վրա և որ կազմված է լոկ բարոյականի և պատվո զգացում-
ներիեն, այս ամբաստանություններու աղղեցութենեն չի կրնար հետզհետե շը-
տրկարանալ և շանհետանալ»¹⁶: Սակայն անհողորդ էր Քրիստափորը և Ար-
փիարյանի առիթով «ոչ մի կոմպրոմիս, ոչ մի իրավախոհություն» չէր ընդու-
նում: Ինչպես Վարանդյանն է նկատում, «Արփիարը նրա աչքում վերջնական
գատապարտյալ էր», քանզի Դաշնակցության ռահվիրան, որ այնքան մեծահո-
գի ու ներողամիտ էր երիտասարդ գործընկերների սխալների ու վրիպումների

¹⁴ Տե՛ս «Նիսիեր» Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Ա հատոր, Բեյրութ, 1984, էջ 21,

¹⁵ «Հայրենիք», 1924, հունիս, էջ 188:

¹⁶ Յուելում «Դրօշակ»-ի, մարտ, 1900, էջ 1:

նկատմամբ, «նույնքան անհաշտ՝ ու աններող էր, երբ խնդիրը կը վերաբերեր հեղափոխական վարիչներին»: Այստեղից էլ միանշանակ այն պնդումը, թե «Արփիար դավաճան է, մանվան պատմի արժանի և ոչ պատվո ատյանի...»: Այնուամենայնիվ, Վարանդյանը մնում էր իր համոզմանը՝ հետագայում հիշելով նույն հարցով իր ընդհարումը սիրելի ուսուցչի՝ Քրիստափորի, ինչպես նաև Յուսուֆյանի ու Վոսմյանի հետ: Քր. Միքայելյանը ստիպված էր ժնեից Փարիզում գտնվող Վարանդյանին հասցեագրել «մի խիստ երկար նամակ»՝ «մեղմորեն հանդիմանելով» նրան հակաուսկորդների պատճառաբանություններին հավատ րնծայելու և տեղի տալու համար. «... ևս մեկն եմ այն կարծիքի պաշտպաններից, որոնք շրջահայեցողությունը, կարելիին շափ անկողմնակալությունը, նույնիսկ ջենտլմենությունը պարտավորեցուցիչ հատկություններ են համարում յուրաքանչյուր պատասխանատու գործ ստանձնողի համար: Տարրական գործնական տախտը ևս նույն պահանջներն է դնում մեր առաջ, եթե այդ բանին շտանք այն վատ մեկնությունը, որ երբեմն տալիս են տհաս գլուխները: Այո՛, այդ բոլորը այդպես: Բայց բոլորովին չեմ հասկանում, թե ինչու ես դու Ք...ից սկսած զիջողությունների հրավերներ կարողում մեզ նաև Չ...ի, Շ...ի, ... «Հայրենիք»-ի և Արփիարի մատնությունների խնդիրներում: ... Ինչո՞ւ... այդքան ներողամիտ ես դեպի մի Չ... և այդքան պահանջկոտ դեպի քս պինակիցները...»¹⁷:

Սակայն պետք է նկատել, որ շնայած այս ամենին, Վարանդյանը մնաց իր համոզումին և Արփիարյանի վախճանից տարիներ հետո էլ կարևորում էր «նրա ինքնարդարացման խոսքը լսելու» անհրաժեշտությունը այն պնդումով, թե «դժվար էր հայրենավաճառ և հայրենադավ լրտեսի ու մատնիչի անունը դրոշմել մի մարդու ճակատին, որ ամբողջ կյանքը սպասավորել էր հայրենիքին...»:

Անշուշտ, անհանդուրժողականության համար բավարար հիմքեր ուներ նաև Քր. Միքայելյանը թեկուզև այն պատճառով, որ նորանոր ամբաստանություններ էին հնչում Արփիարյանի հասցեին, մեղադրալից նոր փաստարկումներով հանդես էին գալիս գործին շատ մոտ կանգնած մարդիկ: Այսպես, 1900 թ. նոյեմբերին Առանձարը (Միսաք Գույումճյան) Յուրիխից գրում էր. «Այդ Արփիար հրեշին անցյալ մութ կյանքին մոտեն ծանոթանալու առիթը ունեցա հոս վերջերս: Պարսկաստանեն Դոկտ. Թիրյաքյանը ընտանիքով հոս եկած էր զավակները դպրոց դնելու նպատակով: ... «Դրօշակ»ի հավելվածին հայտնությունները հաստատելի հետո դեռ այնպիսի սոսկալի բաներ պատմեց, որ այդ շան դեռ ապրիլը ուղղակի հայություն համար նախատինք է: ... Արդ մենք ամենևին ուշադրություն չդարձնելով այդպիսի ազգակործան հրեշի մը դործիք եղող վատերուն ու ապուշներուն՝ պետք է մեր ամբողջ խելքը կենդրոնացնենք մեր գործին վրա»¹⁸:

Ըվ իրոք Դաշնակցությունը հանգիստ թողեց Արփիարյանին: Փոխարենը համառորեն հետապնդել սկսեցին հնչակյան կուսակիցները: 1901 թ. նա թողնում է կուսակցությունը և մեկնում Փարիզ, այնտեղից՝ Վենետիկ, ուր ըսկրսում է հրատարակել «Հայ կյանք» հանդեսը՝ պայքար մղելով վերակազմյալ հնչակյանների և հատկապես Արշակ Չոպանյանի դեմ: «Այս պայքարին արդյունքը այն եղավ, որ «Հայ կյանք»-ի հրատարակություններն քանի մը ամիս ետքը, Արփիար, Վենետիկի մեջ, իրիկուն մը կամուրջ մը անցած ատեն կռնակին բեվովների 4—5 գնդակ ընդունեց և փրավոր գետին ընկավ: Բարեբախտաբար վերքերը մահացու չէին և հիվանդանոց փոխադրվելով շուտով ապաքինվի-

¹⁷ «Հայրենիք», հունիս, 1924, էջ 134:

¹⁸ «Նիսիոթը Հ. Յ. Դաշնակցութեան պատմագրութեան համար», Ա. հատոր, էջ 67:

ցավ»¹⁹; Հետագայում պարզվեց, որ ահաբեկիչը նրան հետապնդել էր դեռ Եգիպտոսից: Գա 1903 թվականին էր, և մահափորձից շատ շանցած՝ Արփիարյանը կրկին անցնում է Եգիպտոս՝ Կահիրեում ստանձնելով «Լուսաբեր»-ի խմբագրությունը: Այս շրջանում է գրվում «Կարմիր ժամուց» վիպակը, որ քննարկվող հարցի տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում:

Ստեղծագործության մեջ ակնհայտորեն շատ բան կա հեղինակի անձնական կենսափորձից ու ապրումներից: Տարիներ անց Արփիարյանն անդրադառնում էր 1890-ի հուլիսյան դեպքերի արձագանքներին, նրա բերած հեղափոխական խմորումներին: Ուշագրավ է հատկապես Հայրապետ էֆենտիի կերպարը, որի կախնակեցությունը սրտամուկության մեջ յուրօրինակ անդրադարձել է հեղինակի կարճատև րանտարկության որոշ հանգամանքներ, ամենայն հավանականությամբ նրան համակած մտածումներ ու զգացումներ: Այսպես, Արփիարյանի պահպանողական ու զգուշավոր հերոսը մի կողմից երկյուղում է «երկարատև բանտարկության» հեռանկարից, մյուս կողմից՝ ցավագին զրդջում այն բանի համար, որ «Մահճեղականներե ունեցած վախուն» նախատած հայածած էր Քրիստոսի հավատարիմ ծառան, և անոր ցկյանս աքսորմանը պատճառ եղած»: Այդ ամենը, սակայն, չեն խանգարում Հայրապետ էֆենտիին ներումն ստանալուն պես փութալ Երլտրզ՝ «սննեկապետի մը միջոցով իր երախտագիտական զգացումները հոտու կայսերական գահոյից» հայտնելու²⁰: Վիպակի գեղարվեստական փաստերին լիովին համահունչ են Գում-Գափուի ցուլցից հետո կալանաված Արփիարյանի հոգևոր-կամային տեղատվությունը, արթնալիսկուպոս խորեն Գուլֆայանի և մյուսների մատնությունը և ապա հայտնի մեղայագիրը սուլթանական ներումն ստանալուց հետո: Ընդհանրությունները, որքան էլ մոտավոր, այնուամենայնիվ զուտ մտացածին ու երևակայական չեն: Ամենայն հավանականությամբ Արփիարյանը զգացել է իր մոտալուտ վախճանը և «Կարմիր ժամուց» վիպակով յուրօրինակ խոստովանություն արել: Զգացել էր, որովհետև հնչակյանները չէին դադարել հետապնդել նրան: «Լուսաբեր»-ում նա վերսկսել էր պայքարը երբեմնի կուսակիցների դեմ, որով փաստորեն խախտում էր «անձին ապահովության համար այն լուելյայն սայմանը, զոր իր գալուստեն առաջ» ընկերներն ու բարեկամները համաձայնեցրել էին վերակազմյալ հնչակյանների հետ²¹:

Արփիարյանին լուեցնելը անհետաձգելի պահանջ է դիտվում: Չախողվում են արջասպով դեմքն այրելու փորձերը, և նոր ահաբեկության որոշում է կայացվում, որն ի կատար է ածվում Կահիրեում, 1908 թ. փետրվարի 12-ին. «Ժամը 9-ին ատենները Շարա է Մարաք, իտալական հյուպատոսարանին դիմացը, իր բնակարանին մոտիկ, ատրճանակի երեք հարվածներով սուրնվեցավ Արփիար Արփիարյանը»²²:

Այսպիսին է եղբրական ավարտը բարդ ու բազմակնճիռ այն «գործի», որը գրեթե ևրկու տասնամյակ երբեմն հախուռն կրքերով, երբեմն հարաբերական հանդարտությամբ, թեր ո՞ն դեմերի հակասական ու տարարժեք դրսևորումներով, բայց անընդհատ բարձր մեջ էր պահում առանց այն էլ բարդություններով հզի հասարակական-քաղաքական կյանքը: Միքայել Վարանդյանի բառերով ասած՝ «Հայկական մեծ, տարամերժ դրամայի բնորոշ արտահայտություններն մինն է Արփիարյանի այդ ողբերգական ճակատագիրը»²³. որը միանշանակ ու բացարձակ գնահատականների չի տրվում:

¹⁹ Ե. Փոլյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 306:

²⁰ Տե՛ս Ա. Արփիարյան, Երկեր, Ե., 1987, էջ 357, 360—362:

²¹ Ե. Փոլյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 380:

²² Նույն տեղը, էջ 488:

²³ «Հայրենիք», 1924, հունիս, էջ 186:

Սկստիչ է Ա. Արփիարյանին Երուսաղի տված բնութագիրը. «Բարիին ու չարին գուգակշտին մէջ՝ այս տարօրինակ հալը բարիին յաղթանակուլը կը սկսի և չարին պարտութիւնովը կը խառնաշփոթուի: Իր հսկայաբերձ մեծութեանը քով՝ գեղեցատարած նկուցութիւնը: Իր հզօր տաղանդին առընթեր՝ աննշան ու փցուն տկարացումը աննկարագիր սափակ մարդու: Իր խանդավառ ու երկնալացիկ ազգասիրութեան կից՝ ընդոստոցիչ հայացքը համաշխարհիկ ստոնաթուրմ անտարբերութեան: Իր հուծկու և անընկճելի անվայտութեան ետին՝ վախի դողդոջկոտ ու սաղսափահար կծկում մը»²⁴:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Տ

Երախտագիտական արտահայտութիւն առ վեհ. սուլթանն

Օսմանեան Կայսրութեան ժողովուրդներէն ոչ միոյն բարոյական կեանքն այնքան զօրեղապէս հիմնած է աւանդութիւններու վրայ որքան Հայ Ազգինը:

Խուժողով ժողովուրդներ մահիւսն դուռն էին բերած հասուցած հայ ազգն, երբ Օսմանեան դրօշակն իր ծալքերուն ներքեւ պաշտպանեց այդ ժողովուրդը, եւ՛ հնարասոր ընծայեց նմա հանգիստ շնչել ու ապրիլ:

Հինգ դարեր անցած են այդ օրէն իվեր եւ հայ ազգին աւանդութիւնն եղաւ այդ հինգ դարերու մէջ թէ՛ Օսմանցին գթած է եւ հայն այդ գթութեան շուքին ներքեւ կը հանգչի:

Այդ սուանդական ԳԹԱՌԱՏՈՒԹԻՒԻՒՆԸ կը մարմնանայ յանձին Վեհ. Սուլթան Համիտ Կայսեր:

Տասն եւ հինգ տարիներէ ի վեր Օսմանեան Կայսրութեան ամէն անկիւններէն ամէն օր տատապեալներու, թշուառներու, տարաբաղդներու օրհնութիւններն՝ Վասն Վեհափառ Սուլթան Համիտի՝ ներդաշնակութիւն մը կազմելով կը բարձրանան յոսս գաճոյց Աստուծոյ. զի ուր ուր թշուառ մը կայ, ուր որ արցունք մը կը թափի, հոն Վեհ. Սուլթան Համիտէն մխիթարութիւն մը կայ:

Եթէ տիեզերք համօրէն կ'սքանչանայ Նորին Վեհափառութեան իմաստութեանը վրայ, կը յուզուի կը խանդաղատի նաեւ Նորա անսահման գթասրտութեանը համար: Այնպէս որ կրնանք ըսել թէ՛ երբ Նախախնամութիւնը պարգեւեց օսմանեան երկրին զՍուլթան Համիտ, Նորա ծնած օրն եթէ Աստուած մատը Նորա ճակտին դնելով իմաստութիւն պարգեւեց, իւրեքն նաեւ երկու հրեշտակներ՝ Գթութեան ու Բարութեան հրեշտակներն, հսկել Նորա օրորոցին մոտ:

Օսմանեան կայսրութեան համար երջանկութեան օր մը եղաւ այն օրն ո՞ր այդ իմաստութեամբ սնած զլուխն, Բարութեան ու Գթութեան հրեշտակներու հովանույն ներքեւ ուռնացած այդ սիրտն, Օսմանեան կայսրութեան տէրն եղաւ:

Վեհ. Սուլթան Համիտի զահակալութեան բարեբաւտիկ օրէն ի վեր նոր դարագլուխ մը բացուած է օսմանեան Կայսրութեան համար, որու ժողովուրդներն երբ կը յիշատակեն Վեհ. Սուլթան Համիտի անունը կը բաւակահանան ըսելով, «ՄԵՒ՛ ՀԱՅՐՈ՛»:

Այդ ՄԵՒ ՀԱՅՐՈ՛ էր որ Իւր գորովալիր սրտովն Յունուար 5-ի իրկուունն յիշեց Իւր հայ գաւակներն ալ:

— Ներեցի, մի լաք, եւ խնդացէ՛ք, ըսաւ:

Այդ հայրագորով «Ներեցի» քառին բոլոր քաղցրութիւնը, բոլոր հրապուրը բանտարկեալի մը չափ ոչ ոք կրնայ գգալ. ապաքէն կայսերակաւ այդ վեհանձն ներողամտութեամբ եթէ ընդհանուր Հայ ազգը Յունուար 5-ի օրը խորին երախտագիտութեան նոր պարտականութիւն մը եւս ունեցաւ առ Վեհափառ Սուլթան Համիտ Կայսրն առատագութ, Հայ ազգին մէջ անոնք որք Խթումի գիշերը արձակելով բանտէն, վերադարձան իրենց սիրելիների մօտ, բնականաբար անոնց երախտապարտութիւնն առ Վեհափառ Կայսրն կրկնակի է եւ անսահման:

Եւ ես, որ այդ գիշերը միայնակ բանտին մէջ անցուցի ալ բոլորովին յուսահատուած ապագայէն, ինչ բացատրութիւն կարենամ գտնել հրապարակաւ թարգմանելու համար յուզեալ սրտիս երախտագիտութիւնն առ գթալիր Կայսրն մեր, որ յաջորդ գիշեր կը հանըր շնորհել ինձ կեանքս ու ազատութիւնս:

Տարօրինակ գուգադիպութիւններ զիս մեղապարտ կը հանդիսացնէին հանդէպ անողոքելի օրհնաց, սակայն Վեհափառ Սուլթան Համիտ Կայսր միտքը գեր ի վերոյ է ամէն օրէնքէն: Գրականութեան պաշտպան Կայսրն գիտէ թէ՛ Իւր Տէրութեան մէջ չկրնար գտնուիլ գրագէտ մը որ մեղապարտ խորհուրդ մը սնուցանէ մտքին մէջ Օսմանեան կայսրութեան

²⁴ Ե. Մրմաքեշխանկեան, Հայ մը, տե՛ս Թէրդիկ, Ամէնուն տարեցոյցը, 1909, Կ. Պօլիս, էջ 82:

հանդէպ: Վեհափառ Սուլթանը թոյլ չ'տուաւ ապաքէն որ օրէնքն անողորքելի՝ ջնջէ վեղցնէ իրապարակէն գրական համեստ աշխատատր մը:

Կեանքս Վեհափառ Սուլթանին պարտական եմ, եւ որքան ապրիմ՝ իմ բոլոր աշխատութիւններս պիտի կայանայ միշտ հանդիսանալ մեր առատագոյթ Կայսեր վեհանձն զգացումներուն ու խորին իմաստութեան քարոզիչն ամէն դասակարգերու մէջ:

Մենք, արդի Հայերս, մեր հայրերէն շատ աւելի բարեբաղդ եմք, վասն զի կապրինք այնպիսի Կայսեր մը օրով, Որուն իմաստութիւնը կ'ապշեցնէ երոպական իմաստութիւնը, որուն գթասրտութիւնն իր անձնուէր գերին կ'ընէ ամէն կարգի հպասակները: Իմաստութիւն եւ գթասրտութիւն երբ կը միանան յանձին մի Կայսեր, հրաշքներ գործել կուտան: Մենք հայերս ալ պէտք է այդ իմաստութեան ու գթասրտութեան անարժան չգըտնուինք, որպէսզի շարունակենք ըլլալ աշխարհ երջանիկ, որ ուրիշ երկիրներու Հայերը նախանձատր ըլլան մեզ:

Արդէն Յունուար 5-ի կայսերական շնորհը կը բաւէ այդ նախանձն առաջ քերելու: Այն կասկածներ ու ամբաստանութիւններ, որք կը ծանրանային հայ բանտարկելոց վրայ, եթէ պատահէին ուրիշ աշխարհի մեջ՝ այդպիսիք երբեք ազատ չէին մնար օրինաց խտութիւններէ:

Ուրեմն գիտնանք մեր Օգոստափառ Վեհապետին հայրական գթասրտութեան եւ անգոգական վեհանձնութեան թանկագին արժէքը: Մեր սիրտը, մեր կեանքը Վեհափառ կայսեր նուիրած մնան միշտ եւ երբեք ոչ ոք մենէ ամենափոքր պղտորութեամբ մը ցաւ պատճառէ մեր գորովալի ՀՕԲ փափուկ սրտին:

Ն. Կ. Վեհափառութեան ամենախոնարհ եւ
երախտագէտ ծառայ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

«Արեւելք», 12, 24 յունուար 1891, թիւ 2098

С. Е. ФАНОСЯН—«Дело» Арпиара Арпиаряна—Трагическая судьба видного западноармянского писателя и публициста А. Арпиаряна—одно из характерных проявлений «большой, противоречивой армянской драмы». В течение двух десятилетий это «дело» постоянно накаляло страсти в и без того сложной общественно-политической жизни конца XIX начала XX вв. В статье анализом достоверных материалов сделана попытка объективно осветить некоторые обстоятельства этого беспрецедентного «дела».